



ՄԻԱՎՈՐՈՒՄ՝ 45 ՏԱՐԻ ԱՆՑ.

ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՋԱԽՋԱԽԻՉ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԱԾ ԵՎ ՄԱՍՆԱՏՎԱԾ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կամքեր ու հոգիներ թրծող աշխատանք է պետք, որ պիտի ստեղծի վաղվա համար ազգովին նախապատրաստվելու մեր հավաքական ճիգը:

Գարեգին Նժդեհ

Հիմնաբառեր. Երկրորդ համաշխարհային պատերազմ, ԳՖՀ, ԳԴՀ, Մարշալի պլան, «տնտեսական հրաշք», Բեռլինի պայտ, միավորում

Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանային տնտեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2019 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում: 2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է: Հեղինակ է մեկ տասնյակ գիտական հոդվածների և մենագրության:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո լիովին պարզված և օկուպացված Գերմանիան բաժանվեց համաշխարհային ռազմաքաղաքական թատերաբեմի հիմնական խաղացողների՝ հաղթած երկրներ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև: Մասնատումից չորս տարի անց՝ 1949 թ.-ին, իրենց ռազմավարական շահերին համապատասխան, հաղթողները ստեղծեցին երկու գերմանական պետություններ՝ ի դեմս Գերմանիայի Ֆեդերատիվ (Դաշնային) Հանրապետության և Գերմանիայի Դեմոկրատական (Ժողովրդավարական) Հանրապետության:

Արդյունքում, ըստ մինչպատերազմյան Գերմանիայի իրավահաջորդության սկզբունքի, «ծնվեցին» պետական կարգով և վարվող տնտեսական քաղաքականությամբ միանգամայն հակադիր բևեռներով պետություններ, որոնք օբյեկտիվ ու սուբյեկտիվ բազում պատճառներով ունեցան զարգացման տարբեր մեկնարկային դիրքեր, ինչն էլ, ի վերջո, կանխորոշեց նրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերն ինչպես եվրոպական տարածաշրջանում, այնպես էլ աշխարհում: Հոդվածում ներկայացվում է գերմանական երկու պետությունների հետապետերազմյան տնտեսությունների զարգացման յուրահատկությունները և փորձ է արվում պարզաբանելու, թե ինչ գործոններ ազդեցին այդ գործընթացների վրա՝ հանգեցնելով Գերմանիայի՝ ոչ թե հավասարը հավասարի, այլ կլանման սկզբունքով միավորմանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմում (1939-1945 թթ.) Երրորդ Ռեյխի ջախջախիչ

պարտության, դրան հաջորդած ծանրագույն կապիտուլյացիայի կնքումից և նացիստական վերնախավի Նյուրենբերգյան դատավարությունից չորս և կես տասնամյակ (մոտավորապես երկու նոր սերունդ) հետո՝ 1990 թ. օգոստոսի 31-ին, հենց այդ նույն պատերազմի պարտության խորհրդանիշ Բեռլին քաղաքում ստորագրվեց գերմանական երկու պետությունների միասնության վերականգնումը ավաստող՝ «Միավորման պայմանագիրը»։ Փաստաթուղթը ստորագրեցին դեռևս 1940-ականների վերջին համաշխարհային ռազմաքաղաքական թատերաբեմի հիմնական խաղացողները՝ պատերազմի հաղթողներ ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան (հենց այս երկրներն էին, իրենց ռազմավարական շահերին համապատասխան, միացյալ Գերմանիան բաժանել Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության (ԳՖՀ)¹ և Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության (ԳԴՀ))։

Պարմություն

Երկրորդ համաշխարհային պատերազմում լիովին պարտված Գերմանիան պատերազմի ավարտից հետո բաժանվեց ազդեցության տարածքների, որոնցից 2-ը միակցվեց ԽՍՀՄ-ին և Լեհաստանին, 5-ը դարձավ շրջափակման 4 գոտի, որի վերահսկման իրավունքը վերապահվեց 4

երկրի՝ ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա և Ֆրանսիա, իսկ հարավ-արևմուտքում մեկ տարածք՝ Սաարը, որը ստեղծվեց 1947 թ., որպես Ֆրանսիայի պրոտեկտորատ², պահպանեց իր կարգավիճակը մինչև 1956 թ., ապա հանրաքվեի արդյունքում ինքնուրույն հողի կարգավիճակով միացավ ԳՖՀ-ին։

Իր հերթին, 4 գոտու բաժանվեց նաև Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինը։ Թվում էր՝ գոյաբանական առումով, ամեն ինչ վերջացած է եվրոպական քաղակարծության կարևոր օջախներից մեկի՝ որպես միասնական պետության հետագա կենսագործունեության համար, և անգամ հաղթած պետությունների ղեկավարները բանակցությունների ժամանակ դժվարանում էին ձևակերպել, թե ինչ է իրենից ներկայացնում ջախջախված ու պարտված ֆաշիստական Գերմանիան, քանի որ այն արդեն իսկ զրկված էր պետության կարևորագույն ինստիտուտներից, չունեի իշխող քաղաքական ուժ, կառավարություն, հստակեցված սահմաններ, բանակ, սահմանապահ զորքեր և ուղղակի բաժանված էր հաղթող երկրների կողմից հսկվող ազդեցության գոտիների՝ իր պարտված, հուսահատ և աղքատ բնակչությամբ։

Պատերազմում հիմնովին պարտված, քայքայված տնտեսությամբ և անորոշ ա-



ՆԿԱՐ 1

Գերմանիայի օկուպացիան և մայրաքաղաք Բեռլինի մասնատումը, 1945 թ.

¹ «Ֆեդերատիվ» օտարալեզու հասկացությունը գործածվել է շուրջ 4 տասնամյակ, ներկայում թարգմանվում է որպես «դաշնային», սակայն, հաշվի առնելով, որ հետագայում ստեղծվեց նաև Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը, հողվածում երկու Գերմանիաների հապավումները տարբերակելու համար առաջինը կնշվի ԳՖՀ, երկրորդը՝ ԳԴՀ։

² https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D1%80%D0%BE%D1%82%D0%B5%D0%BA%D1%82%D0%BE%D1%80%D0%B0%D1%82_%D0%A1%D0%B0%D0%B0%D1%80


պագայով Գերմանիայի մասնատման հիմնական ջատագովը Մեծ Բրիտանիան էր, որն ուներ հեռահար նախագիծ, որպես անգլո-սաքսոնական մտքի ծնունդ, օկուպացված գոտիները դարձնելու առանձին պետություններ՝ կապիտալիստական ուղղվածությամբ կամ, վատագույն դեպքում, փոկային միավորումների արդյունքում վերակազմավորելու մեկ միասնական կապիտալիստական Գերմանիա, ըստ էության, անգլո-սաքսոնական հովանու ներքո՝ ռազմաքաղաքական և տնտեսական առումով հնարավորինս ձերբազատելով ԽՍՀՄ ազդեցությունից:

Հարկ է նշել, որ դեռևս 1943 թ.-ին արտաքին գործերի նախարարների մոսկովյան հանդիպմանը³ ԽՍՀՄ-ն ավելի շատ հակված էր ապագա Գերմանիան տեսնելու այդ ժամանակվա Ավստրիայի նմանօրինակով՝ որպես միասնական պետություն՝ թեկուզ և բուրժուադեմոկրատական հասարակարգով: Մեծ Բրիտանիան, սակայն, ցանկանում էր Գերմանիան տեսնել մասնատված՝ իբրև մի քանի առանձին կապիտալիստական պետություններ (մասնավորապես՝ անջատված Պրուսիայով): Այդուհանդերձ, պատերազմի ավարտին, ընկալելով ԽՍՀՄ որոշիչ դերը խնդրի կարգավորման հարցում, գիտակցելով իր նախագծի անիրագործելիության հանգամանքը, Մեծ Բրիտանիան որոշեց հնարավորինս միավորել իր (անգլո-սաքսոնական) ազ-

դեցության գոտու օկուպացված տարածքները: Արդյունքում, 1946 թ.-ին Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ ազդեցության տակ գտնվող օկուպացված տարածքները միաձուլվեցին «Բիզոնիա» (Երկգոտի) կոչված միավորի մեջ, որին այնուհետև միացավ Ֆրանսիայի ազդեցության տակ գտնվող օկուպացված տարածքը և կոչվեց «Տրիգոնիա» (Եռագոտի), որի հենքի վրա էլ 1949 թ. ապրիլին ստեղծվեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը (ԳՖՀ):

Ըստ անգլո-սաքսոնական փոփոխված պլան-նախագծի՝ արդեն մեկ ընդհանուր Գերմանիա կազմավորելու ակնկալիքով, նախատեսվում էր ստեղծել նախապայմաններ և «Տրիգոնիային» կցել ԽՍՀՄ ազդեցության տակ գտնվող օկուպացված գոտին, սակայն այդ ժամանակահատվածում դա հնարավոր չէր կյանքի կոչել, քանի որ, որպես հակակշիռ ԳՖՀ-ին, նույն տարվա աշնանը՝ 1949 թ. հոկտեմբերի 7-ին, ԽՍՀՄ-ն իր վերահսկման տակ գտնվող օկուպացված տարածքում ազդարարեց սոցիալիստական նոր միավորի՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության (ԳԴՀ) ստեղծման մասին:

Այսպիսով՝ մինչպատերազմյան Գերմանիայի իրավահաջորդության սկզբունքով ստեղծվեց երկու պետություն: Դրանք, որպես միանգամայն հակադիր բևեռներ, տարբերվում էին իրենց պետական կարգով և վարվող տնտեսական քաղաքակա-



ՆԿԱՐ 2

Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կողմից օկուպացված տարածքների միավորումը, 1946 թ.

³ Дженкинс Р., Франклин Делано Рузвелт, КоЛибри, 2013, с. 234-237.



ՆԿԱՐ 3

Գերմանիայի վերջնական մասնատումը երկու պետության, 1949 թ. գարուն-աշուն

նությամբ, ինչպես նաև սահմանազատված էին այդժամ գործող՝ հարակից պետությունների բաժանման բոլոր սահմանային կանոններով: Միաժամանակ, հաղթող երկրների միջև առկա ներքին խոր հակասությունների խորհրդանիշը դարձավ չորս տարածքի բաժանված բեռլինյան անկլավը, որի արևելյան հատվածը հռչակվեց որպես ԳԴՀ մայրաքաղաք: 1961 թ.-ին ԽՍՀՄ քաղաքական ղեկավարության հրահանգով կառուցվեց Բեռլինն արևելյան և արևմտյան մասերի բաժանող բետոնե արգելապատը⁴, որին վերապահված էր գոյություն ունենալ շուրջ երեք տասնամյակ:

Գերմանական երկու պետությունները յուրաքանչյուր ասպարեզում՝ ռազմաքաղաքական (ԳՖՀ-ն դարձավ ՆԱՏՕ-ի անդամ, իսկ ԳԴՀ-ն հայտնվեց Վարշավյան պայմանագրի երկրների կազմում), տնտեսական, գիտական, մշակութային, մարզական և այլն, դարձան սոցիալիստական և կապիտալիստական երկրների սուր մրցակցության, հաճախ նաև առճակատման առաջնագծի կարևորագույն սուբյեկտներ:

Հերպարտերազմյան Գերմանիայի տնտեսությունը

Պարտված և ծանր կապիտուլյացիա ապրած Գերմանիան XX դարում, երկրորդ անգամ՝ Առաջին համաշխարհային պատերազմից 27 տարի անց, կրկին ստիպված էր ամեն ինչ սկսել գրեթե զրոյից: Հարկ է


նշել սակայն, որ նորաստեղծ երկու գերմանական պետությունների համար մեկնարկային պայմանները համարժեք չէին: Մասնավորապես՝ մինչև գերմանական երկու պետության ստեղծումը, 1947 թ. հունիսին ԱՄՆ-ը հայտարարեց շուրջ 6 տարի պատերազմական թատերաբեմ դարձած Եվրոպայի վերականգնման համապարփակ գործողության՝ Մարշալի պլանի⁵ մասին, որը հետապնդում էր 3 հիմնական նպատակներ.

1. խրախուսել եվրոպական երկրներին վերսկսելու քաղաքական և տնտեսական համագործակցություն և նպաստել նրանց արագ ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը,
2. թույլատրել այդ երկրներին հումք և սարքավորումներ գնել կայուն արժույթով երկրներից,
3. դիտարկել ծրագիրը՝ որպես ամերիկյան արտադրանքի արտահանման խթանման համար կարևոր գործիք:

Խորքային առումով, Մարշալի պլանը, նախ և առաջ, միտված էր ԱՄՆ քաղաքական և տնտեսական շահերի սպասարկմանը, և ներդրվող՝ միլիարդավոր դոլարների հասնող վարկային միջոցները ենթադրում էին ոչ միայն ֆինանսական, այլև մեքենասարքավորումների, ինչպես նաև անհատույց տրամադրվող արագամաշ առարկաների և սկզբնական արտադրությանն անհրաժեշտ արտադրական պա-

⁴ Բեռլինի պատը, որը կառուցվել էր 1961 թ., քանդվեց 1989 թ. նոյեմբերի 9-ին՝ որպես Գերմանիայի միավորման գործընթացի խորհրդանշական մեկնարկ:

⁵ 1947 թ. հունիսի 5-ին Հարվարդի համալսարանում ԱՄՆ պետքարտուղար Զորջ Մարշալը հանդես եկավ ելույթով, որտեղ նախանշեց պատերազմից տուժած Եվրոպայի վերականգնմանն աջակցության ծրագիրը, որը կոչվեց «Մարշալի պլան»:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Մարշալի պլանը 1947-1951 թթ. (12.4 մլրդ ԱՄՆ դոլար)

շարների հատկացումներ, որոնց առկայությունը հնարավոր էր ապահովել, նախ և առաջ, ԱՄՆ-ի միջոցով:

Ծրագիրն ԱՄՆ Կոնգրեսի հաստատումից հետո մեկնարկեց 1948 թ. դեկտեմբերին և տևեց մինչև 1951 թ. տարեվերջ (գծապատկեր 1):

Ծրագրով իրականացված հատկացումները կազմեցին 12.4 մլրդ դոլար, որի հիմնական չափաբաժինը՝ շուրջ 9 մլրդ ԱՄՆ դոլար, տրվեց Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Իսպանիային, ԳՖՀ-ին, Հոլանդիային, իսկ մնացած 3.5 մլրդ-ը տարբեր ձևաչափերով բաժին հասավ պատերազմից տուժած կապիտալիստական «ճամբարի» արևմտաեվրոպական երկրներին (Իտալիա, Պորտուգալիա, Բելգիա, Դանիա, Նորվեգիա, Շվեդիա, Ավստրիա, Հունաստան) և Թուրքիային⁶: Ֆինլանդիան հրաժարվեց աջակցման այդ ծրագրից:

Գծապատկեր 1-ից ակնառու երևում է անգլո-սաքսոնական «ձեռագիրը», և տեսանելի է, որ Մեծ Բրիտանիային հատկացված միջոցների չափաբաժինն ավելի քան երկու անգամ գերազանցում է առավել ծանր վիճակում գտնվող և օժանդակության կարիք ունեցող ԳՖՀ-ին տրա-

մադրված միջոցների չափը:

Հասկանալի է, որ երկու Գերմանիաներից այս ծրագրին միանալու միակ հավակնորդը ԳՖՀ-ն էր, որը մինչև կազմավորումն արդեն իսկ ստանում էր բավարար հատկացումներ, բայց պաշտոնապես դրան միացավ 1949 թ. դեկտեմբերին, դառնալով հիմնական մասնակից երկրներից մեկը, ինչը, ԳԴՀ-ի համեմատությամբ, տնտեսության վերակենդանացման և զարգացման առումով, մեկնարկային էական առավելություն դարձավ:

ԳՖՀ տնտեսության զարգացումը. Մարշալի պլանն ու Լյուդվիգ Լենհարդի «տնտեսական հրաշքը»

Մարշալի պլանով սկիզբ դրվեց ԳՖՀ նոր տնտեսական քաղաքականության սկզբունքների ձևավորման գործընթացին, սակայն գործնական դաշտում պետությունում իրականացված «տնտեսական հրաշքի» կնքահայրը Լյուդվիգ Էրհարդն⁷ էր, որին անվանում են նաև ԳՖՀ տնտեսական քաղաքականության վերածննդի ճարտարապետ: Վերջինիս ձեռնարկած բարեփոխումների արդյունքում, ընդամենը մի քանի տարում ԳՖՀ-ն տնտեսապես ամրապնդվեց, «շտկեց մեջքը» և հավա-

⁶ <https://histrf.ru/biblioteka/b/istoriia-plana-marshalla>
⁷ Լյուդվիգ Վիլհելմ Էրհարդ (Ludwig Wilhelm Erhard) - 1897-1977 թթ. արևմտագերմանական տնտեսագետ, քաղաքական գործիչ:
 1945 թ. սեպտեմբեր՝ Բավարիայի տնտեսության պետական նախարար, ապա դրամավարկային հարցերի հատուկ բաժանմունքի ղեկավար,
 1948 թ. մարտ՝ Բիզոնիայի տնտեսական կառավարման տնօրեն,
 1949-1963 թթ.՝ ԳՖՀ տնտեսության նախարար,
 1963-1966 թթ.՝ ԳՖՀ կանցլեր:

սարի պես կանգնեց Արևմտյան Եվրոպայի հզորների կողքին: Դեռևս 1948-ին Լ. Էրհարդը սեփական նախաձեռնությամբ արդեն իսկ իրականացրել էր «Բիզոնիայի» տնտեսության ազատականացմանը միտված հստակ գործողություններ: Մասնավորապես, զբաղեցնելով «Բիզոնիայի» տնտեսական կառավարման տնօրենի պաշտոնը, Էրհարդը հրաժարվել էր պետական պլանավորումից և ապրանքների գնագոյացման կենտրոնացված եղանակից՝ գերմանացի արտադրողներին ընձեռելով գործունեության լիակատար ազատություն: Էրհարդի առաջարկած «սոցիալական շուկայական տնտեսության» զարգացման մոդելն ըստ էության բնակչության բոլոր շերտերի բարեկեցության մակարդակի բարձրացման և ազատ շուկայական մրցակցության ու մասնավոր ձեռնարկատիրության յուրօրինակ համակցման ճանապարհով իրականացվող զարգացման երկարաժամկետ ծրագիր էր, որտեղ պետության դերը սոցիալական արդարության, ազնիվ մրցակցության համար նախադրյալներ ու պայմաններ ապահովելն էր:

Ծրագիրն ակնհայտորեն իրատեսական էր, և արդեն 1950-ականների սկզբին ԳՖՀ տնտեսությունում արտադրության ծավալն ամեն ամիս աճում էր 3-5%-ով: Դրան նպաստող կարևոր գործոններից մեկը Հյուսիսային և Հարավային Կորեաների միջև ծագած պատերազմն էր (1950-1953 թթ.)⁸, քանի որ էժան աշխատուժով կայունացող տնտեսությունն արտաքին առևտրի ոլորտում սկսեց արագորեն և նպատակադրված ծածկել համաշխարհային շուկայի արևելյան տարածաշրջանի պահանջարկի դաշտը, որն այդ պահին հումքի ու տարատեսակ մեքենասարքավորումների ու ապրանքների խիստ կարիք ուներ: Թռիչքաձև զարգանում էին մեքենաշինությունը, օպտիկական իրերի և էլեկտրաէներգիայի արտադրությունը: 1950-ական թթ. կեսերին տնտեսական աճը սկսեց դանդաղել, սակայն, ԳՖՀ կառավարության ձեռնարկած նպատակային միջոցառումների շնորհիվ, սկսվեց կապիտալի

ակտիվ ներհոսք, որը հնարավորություն ընձեռեց թարմացնելու և արդիականացնելու արտադրական միջոցների զգալի մասը, վերակենդանացնելու ծանր արդյունաբերությունը, ինչի արդյունքում 1953-1956 թթ. արդյունաբերական արտադրության տարեկան աճն արդեն կազմում էր 10-15%: Արդյունաբերական արտադրանքի ծավալով ԳՖՀ-ն ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից հետո աշխարհում զբաղեցրեց երրորդ տեղը: Լենհարդի ծրագրի կարևոր «մեխանիզմ» էր ձեռներեցության խթանումը՝ ի դեմս փոքր և միջին բիզնեսի զարգացման: Պատերազմի ավարտից 10 տարի անց՝ 1950-ականների միջնամասում, 500-ից պակաս աշխատող ունեցող ձեռնարկություններում աշխատում էր ամբողջ տնտեսության մեջ զբաղվածների կեսից ավելին, իսկ գործազրկությունն ուներ կայուն անկման միտում (1950 թ.-ի 10,3%-ից 1960 թ.-ին դարձավ 1,2%): Միաժամանակ, այդ ընթացքում, ցածր հարկերի շնորհիվ, ԳՖՀ ՀՆԱ-ն դարձավ ամենաբարձրն արևմտաեվրոպական երկրների շրջանում, իսկ գնաճը՝ ամենից ցածրը:

Գյուղատնտեսության ոլորտում նույնպես իրականացվեցին բարեփոխումներ, որոնց արդյունքում հողի հիմնական մասը փոխանցվեց փոքր և միջին սեփականատերերին: ԳՖՀ գյուղատնտեսության զարգացման համար որոշիչ գործոն էր նաև գիտության նոր նվաճումների գործնական ներդրման քաղաքականության վարումը, ինչը ներդրումային լուրջ հոսքեր ապահովեց տնտեսության այդ ճյուղ՝ ապահովելով արտադրողականության և բերքատվության էական աճ: Գյուղմթերքների արտադրության ու սպառման առումով, 1950-ականների կեսերին ԳՖՀ-ն դարձավ ինքնաբավ երկիր և սկսեց արտահանման լայնածավալ ծրագրերի իրականացումը:

Լանհարդի «տնտեսական հրաշքի» կարևոր բաղադրիչներից էր նաև դրամավարկային կոշտ քաղաքականությունը: Հետպատերազմյան շրջանի երեք տարիներին ռալիսմարկն ըստ էության «կնքեց իր մահկանացուն»: Պատերազմից 3 տարի անց՝

⁸ <https://militaryarms.ru/voennye-konflikty/korejskaya-vojna/>

1948 թ.-ին, իրականացվեց դրամավարկային կոշտ բարեփոխում՝ ուղղված մաշված փողի բռնագրավմանը և կայուն արժույթի ստեղծմանը, ինչի արդյունքում ի հայտ եկավ նոր արժույթ՝ գերմանական մարկը (Deutschmark), որը հետագայում դարձավ XX դարի ամենակայուն արժույթներից մեկը: Հին և նոր մարկերի՝ 10:1 հարաբերակցությամբ փոխանակման ժամանակ սահմանվեց յուրաքանչյուր անձի մոտ առկա փոխանակվող հին մարկի սահմանաչափ, իսկ մնացած ավելցուկը, ըստ էության, դուրս գրվեց, որը հնարավորություն ընձեռեց ապահովելու նոր արժույթի կայուն փոխարժեք, ինչպես նաև պահպանելու բնակչության տարբեր շերտերի միջև միջոցների հավասար բաշխման՝ հոշակված սկզբունքը, քանի որ մինչ այդ երկրի արժույթի մեծ մասը կենտրոնացած էր փոքրաքանակ, բայց հարուստ անձանց ձեռքում: Արդյունքում առաջացավ բավական ազդեցիկ և կայուն միջին խավ:

Դրամական բարեփոխումներին զուգահեռ, «ազատ արձակվեցին» գները: Լենհարդի գնագոյացման քաղաքականությունը հիմնված էր գների ազատականացման սկզբունքի վրա, իսկ պետությունը պահպանում էր դրանց նկատմամբ մասնակի վերահսկողության իրավունքը: Մասնավորապես՝ կառավարությունը սահմանեց որոշ սպառողական ապրանքների գների առավելագույն շեմ, ինչը թույլ չէր տալիս դրանց կամայական բարձրացում արագ հարստացում ակնկալող ձեռնարկատերերի կողմից:

Այս գործընթացին հաջորդեց հակամենաշնորհային քաղաքականության գործնական իրականացումը՝ համաձայն որի սպառողական շուկայում մեկ ընկերության մասնաբաժինը չէր կարող գերազանցել 33%-ը, 2-3-ինը՝ 50%-ը, իսկ 4-5-ինը՝ ոչ ավելի, քան 65%-ը:

Այս ամենի արդյունքում արդեն 1950-ականների սկզբին ԳՖՀ-ն հասել էր արտադրության նախապատերազմյան մակարդակին, իսկ 1962 թ.-ին այն եռապատիկ ավելացավ, և երկրի տնտեսությունն

արտադրության և արտահանման ծավալով աշխարհում զիջում էր միայն ԱՄՆ-ին:

Լյուդվիգ Լենհարդի «տնտեսական հրաշքն» արդեն իրականություն էր, իսկ նա 1963 թ. արժանիորեն դարձավ ԳՖՀ կանցլեր:

Երբ Լենհարդին հարցնում էին, թե որն է գերմանական «տնտեսական հրաշքի» բանալին, նա թվարկում էր անհրաժեշտ պայմանները⁹.

- հմուտ կառավարություն և իրատեսական տնտեսական քաղաքականություն,
- աշխատանքային կարգապահություն և նվիրումով քրտնաջան աշխատանք,
- ձեռներեցների բանիմացություն և ճկունություն:

1950-1960 թթ. գերմանական տնտեսության արագ աճը XX դարի երկրորդ կեսին ապահովեց ԳՖՀ առաջատար դիրքը եվրոպական տնտեսության մեջ՝ դառնալով Գերմանիայի միավորման տնտեսական հիմքը:

ԳԴՀ տնտեսության զարգացումը, Բեռլինի պատն ու վերամիավորման նախադրյալները

1949 թ. հոտեմբերի 7-ին Գերմանիայի կոմկուսի վետերան, վտարանդի Վիլիելմ Պիքը ԽՍՀՄ-ից վերադարձավ Գերմանիա և Արևելյան Բեռլինում՝ նախկին «Երրորդ ռեյխի» օդային նախարարության հավաքների դահլիճում հանդիսավոր կերպով հոշակեց Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ստեղծումը¹⁰: Ի տարբերություն ԳՖՀ-ի, ԳԴՀ տնտեսական զարգացման համար ընտրվեց ԽՍՀՄ հետպատերազմյան զարգացման մոդելը, հիմքում ունենալով կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության սկզբունքների համակցումը, որը տարիների ընթացքում և ապա միավորման գործընթացում ակնառու ցույց տվեց, թե որքան է զիջում ազատ տնտեսական զարգացման մոդելին, որով առաջնորդվում էին ԳՖՀ տնտեսությունն ու պետությունն ընդհանրապես:

Ի սկզբանե, մեկնարկային պայմաններն

⁹ Маркова А.Н., Скворцова Е.М., Эрхард Л. Благосостояние для всех, Начала-пресс, 1991.

¹⁰ <https://www.dw.com/ru/как-и-зачем-была-создана-гдр/>

օբյեկտիվորեն ու սուբյեկտիվորեն տարբեր էին. դեռևս նախապատերազմյան շրջանում Գերմանիայի արևելյան մասը՝ ԳԴՀ տարածքը, տնտեսապես թույլ զարգացած էր ու մեծապես կախում ուներ արևմտյան մասից: Դրան ավելացավ նաև այն, որ պատերազմի ավարտից հետո, որպես ռազմատուգանք և իրեն «հասանելիք» ռազմավար, ԽՍՀՄ-ը Արևելյան Գերմանիայի տարածքում «քամեց» տնտեսության և անգամ մշակույթի (օրինակ՝ Դրեզդենի թանգարանի անգնահատելի հավաքածուն)՝ դեռևս չվնասված շարժական գույքը, սկսած կահույքից, գրասենյակային միջոցներից, վերջացրած՝ արտադրական հզորություններով (մեքենասարքավորումներ, հոսքագծեր, արտադրական գործիքներ) և տրանսպորտային միջոցներով (նավատորմ, երկաթգծի շարժակազմեր, ավտոտրանսպորտ՝ բեռնատարներ, ավտոբուսներ, մարդատար ավտոմեքենաներ, անգամ մոտոցիկլետներ և հեծանիվներ): Այսինքն՝ երկու պետություններից մեկում՝ ԳՖՀ տարածքում, որը համեմատաբար քիչ էր տուժել ավիահարվածներից ու հետևակի պատերազմական գործողություններից, դեռևս 1948 թ.-ին սկսեցին իրականացվել ներդրումների տեսքով ակտիվ վերականգնողական աշխատանքներ, իսկ ԳԴՀ հատվածը պատերազմից հետո՝ «հատուցման» վճարի «քողի տակ», ենթարկվեց դասական թալանի: Ինչ վերաբերում է բուն հատուցման վճարին, ապա անգլո-սաքսոնական հովանավորության տակ գտնվող ԳՖՀ-ն, իրերի անհասկանալի դասավորության պատճառով, շուրջ 45 անգամ պակաս վճարեց հատուցման գումարը, որը 1953 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 2.1 մլրդ գերմանական մարկ, իսկ ԳԴՀ-ի պարագայում դա 99.1 մլրդ էր:

Նախապատերազմյան Գերմանիայի արևելյան հատվածն իր արդյունաբերական ու գյուղատնտեսական պահանջների 45%-ը ստանում էր արևմտյան մասից, քանի որ երկրի հումքային բազան, մետաղագործական, էներգետիկ և ծանր արդյունաբերությունը տեղակայված էին հիմնականում Գերմանիայի արևմտյան շրջաններում: Բացի այդ, ավերիչ պատե-

րազմի հետևանքով անօգտագործելի մետաղի ջարդոնի էին վերածվել արդյունաբերական սարքավորումների 45%-ը, էներգետիկ հզորությունների 70%-ը և գյուղատնտեսական տեխնիկայի 40%-ը:

Փաստորեն, նման բաժանման հետևանքով ԳԴՀ-ն կտրվեց իրեն սնուցող «պորտալարից»՝ ծանր արդյունաբերության, մետաղագործության և էլեկտրաէներգիայի արտադրման ավանդական կենտրոններից: Հետևապես՝ երկիրը հայտնվեց մեկնարկային էականորեն թույլ պայմաններում և տնտեսության զարգացման առումով, դատապարտված էր երկու պետությունների մրցապայքարում անընդհատ լինելու երկրորդը՝ ի սկզբանե ունենալով ԽՍՀՄ-ից կախյալ վիճակ:

Սակայն, երկու պետություններում էլ ապրում էր նույն ժողովուրդը, և անգամ դժվարին մեկնակետից, անհավատալի ջանքերի գնով ու կարգապահ աշխատանքի շնորհիվ, ԳԴՀ-ն կարողացավ արագացված տեմպերով հաղթահարել առկա դժվարությունները և չեզոքացնել իր տնտեսության գոյության առաջին տարիների ամենավտանգավոր անհամամասնությունները: Քաղաքական որոշումների արդյունքում, ԽՍՀՄ-ի կողմից ստացվող օժանդակությունների հաշվին, վերստեղծվեցին ամբողջ արդյունաբերական հզորությունները՝ ներառյալ հաստոցաշինությունը և թեթև, մասնավորապես՝ տեքստիլ արդյունաբերության զգալի մասը: Հանրայնացվեցին նացիստական վերնախավին ու գործարարներին պատկանող շուրջ 4000 փոքր, միջին ու մեծ ձեռնարկություններ, հողատարածքներ, որոնք հետագայում ժողովրդավարական բարեփոխումների արդյունքում կոոպերացիայի և ագրարային տնտեսությունների ստեղծման հնարավորություն ընձեռեցին: Սակայն, օբյեկտիվ պատճառներով, հաշվի առնելով նաև հատուցման վճարի առաջացրած դժվարությունները, արդեն 1950-ականների կեսերին սկսվեցին սոցիալական դժգոհությունները, որոնց կիզակետը դարձավ 1953 թ. ամռանը Արևելյան Բեռլինի բանվորական գործադուլը, որը սոցիալականից սահուն կերպով վերածեց քաղաքականի, ինչից հետո ԳԴՀ իշխող ուժը 1954 թ.-ին հռչա-

կեց «նոր կուրսի» մասին¹¹, որի հիմնական նպատակներից մեկը բնակչության կենցաղային պայմանների բարելավումն էր: Այդ համատեքստում ԽՍՀՄ-ն ու Լեհաստանը «մեծահոգաբար» հրաժարվեցին ԳԴՀ-ից հավաքագրել հատուցման վճարի վերջին մասը, որը մոտ 2.5 մլրդ ԱՄՆ դոլար էր:

Այդ պահից սկսած՝ ԽՍՀՄ իշխող վերնախաւն ակնառու կերպով տեսնում էր ԳԴՀ՝ որպես առանձին պետության զարգացման դժվարությունն ու անհեռանկարայնությունը և ցանկանում մնացած «խաղացողներին» առաջարկել վերամիավորման իրեն նպաստավոր տարբերակներ: Մասնավորապես՝ 1954 թ. չորս հաղթած տերությունների արտգործնախարարների մասնակցությամբ Բեռլինում տեղի ունեցած խորհրդաժողովում¹² ԽՍՀՄ-ը կրկին բարձրաձայնեց ազատ ընտրությունների միջոցով նոր ապառազմականացված միասնական Գերմանիայի ստեղծման մասին¹³: Սակայն, Հյուսիսատլանտյան ռազմաքաղաքական դաշինքն (ՆԱՏՕ)¹⁴ արդեն սկսել էր ԳՖՀ-ն իր կազմում ներառելու գործընթացը, որն ավարտվեց 1955 թ. մայիսի 9-ին: Դրան ի պատասխան, նույն ամսին ԽՍՀՄ նախաձեռնությամբ ստեղծվեց «սոցճամբարի» երկրների ռազմաքաղաքական դաշինքը՝ «Վարշավյան հապայմանագիր»¹⁵ անվանումով, որին միացավ նաև ԳԴՀ-ն:

Այսպիսով՝ այս փուլում գերմանական պետությունների վերամիավորումը, ըստ էության, դուրս հանվեց Քառյակի օրակարգից, իսկ երկու ճամբարների միջև էլ ավելի սրվող «սառը» հակամարտությունը շարունակեց քայքայիչ ազդեցություն գործել ԳԴՀ տնտեսության վրա: Մասնավորապես՝ դա բացասաբար ներգործեց ԳԴՀ մայրաքաղաք Արևելյան Բեռլինի պարագայում, որը, ըստ էության, բաց սահմաններ ուներ Արևմտյան Բեռլինի հետ, ինչն ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական առումով, խաթարում էր ԳԴՀ անվտանգ կենսագործունեությունը: Բեռլինի

«բաց սահմանի» պատճառով ԳԴՀ կորուստները 1949–1961 թթ. կազմել էին շուրջ 120 միլիարդ մարկ: Նույն ժամանակահատվածում Բեռլինի արևմտյան հատվածով երկրից անօրինական կերպով արտագաղթեց մոտ 1,6 միլիոն մարդ: Երկիրն այդ բաց «պատուհանով» անվերադարձ լքողների մաճամասնությունը որակյալ ինժեներներ ու բժիշկներ էին, ուսուցիչներ, դասախոսներ, մշակութային գործիչներ, ի վերջո՝ հմուտ բանվորական աշխատուժ, որոնց հեռանալը ոչ միայն քաղաքական կամ տնտեսական, այլև բարոյահոգեբանական հսկայական կորուստ էր ԳԴՀ-ի համար: Այս անհավասար «սառը» հակամարտությունը ստիպեց ԳԴՀ հովանավոր ԽՍՀՄ-ին գնալ կոշտ հակաքայլերի, և 1961 թ., պետական սահմանի անվտանգության նկատառումներից ելնելով, կառուցվեց աշխարհին հայտնի Բեռլինի պատը՝ ահռելի արտագաղթն ինչ-որ կերպ կանգնեցնելու նպատակով: Հետագա՝ 1960-1970 թթ. ԳԴՀ տնտեսության զարգացումն իր տրամաբանության մեջ ուներ քաղաքական աննախադեպ մեծ ու խանգարիչ չափաբաժին, որն արդեն իսկ խարխրում էր անկախ պետություն կառուցելու կարևոր սկզբունքը: Ըստ 1968 թ. նոր սահմանադրության՝ ԳԴՀ-ն հռչակվեց որպես «գերմանացի ազգի սոցիալիստական պետություն», ինչն ուղղակի ցուցադրում էր քաղաքական հզոր ճնշման առկայությունը: Սակայն, պետության կորստի «գնացքն արդեն կայարանից սկսել էր շարժվել», և 1970-ական թթ. սկզբին սկսվեց գերմանական երկու պետությունների երկխոսության ժամանակաշրջանը: «Հավասարը հավասարի պես» թվացյալ սկզբունքի շղարշն ապահովելու նպատակով Արևմուտքը ճանաչեց ԳԴՀ-ն՝ որպես երկխոսության ինքնուրույն կողմ, և 1973 թ.-ին երկիրը դարձավ ՄԱԿ-ի անդամ:

Ինչ խոսք, «սոցճամբարի» զարգացման համատեքստում ԳԴՀ-ն, տնտեսության զարգացման առումով, առավել բարենպաստ դիրքում էր և ուներ հաջո-

¹¹ Павлов Н.В., Внешняя политика ГДР (1949 – 1990) / Н.В. Павлов // MGIMO.ru. – 2012
¹² <https://www.un.org/press/docs/1959/19590519590501.html>
¹³ ԽՍՀՄ-ը նմանօրինակ ևս մեկ փորձ արել է 1959 թ.-ին, որը նույնպես անհաջողության է մատնվել :
¹⁴ https://ru.wikipedia.org/wiki/Список_государств_—_членов_НАТО/
¹⁵ https://hy.wikipedia.org/wiki/Վարշավայի_պայմանագիր/

ղություններ, բայց և այնպես, զիջում էր ԳՖՀ-ին թե՛ իր զարգացման մակարդակով, թե՛ դրա տեմպերով, թե՛ ինքնավարությամբ, ինչը բացասաբար էր անդրադառնում այստեղ ապրող ու արարող ժողովրդի տրամադրության ու հոգեբանության վրա:

Միավորման գործընթաց

1980-ական թթ. միջնամասում ԽՍՀՄ ղեկավար Միխայիլ Գորբաչովի հոչակած Վերակառուցման քաղաքականությունն իրապես ճակատագրական նշանակություն ունեցավ ԳԴՀ-ի համար: Այդ ժամանակահատվածում գերմանական երկու պետությունների միջև վերացան ուղևորությունների տարաբնույթ սահմանափակումները, որից, ինչ խոսք, շահեցին ԳԴՀ-ում ապրողները: Թեև ԳԴՀ իշխանական վերնախավի դժգոհություններին, արտագաղթի ակտիվ գործընթացը դարձավ անշրջելի, և Արևելյան Գերմանիայի քաղաքացիները սկսեցին «ներքևից» իրականացնել բարեփոխումների յուրօրինակ գործընթաց: 1989 թ.-ին քաղաքական անկայունությունը հասավ իր գագաթնակետին, ինչի խորհրդանիշը դարձավ համաշխարհային պատմության համար առանցքային իրադարձություններից մեկը՝ 1989 թ. նոյեմբերի 9-ին Բեռլինի պատի խորհրդանշական փլուզումը, որը կանխորոշեց նաև «երկաթե վարագույրի»¹⁶ վերացումը և յուրօրինակ ազդակ հանդիսացավ ոչ միայն ԳԴՀ, այլև կոմունիստական գաղափարախոսության հիմքով ստեղծված եվրոպական մի շարք երկրներում իրապես ժողովրդավարական շարժումների մեկնարկի համար: ԳԴՀ-ում, այդպիսի շարժման արդյունքում, հեռացավ սոցիալիստական Գերմանիայի վերջին մոհիկանը՝ Էրիխ Հոնեկերը, սակայն ճգնաժամը դրանով չհաղթահարվեց:

ԳԴՀ-ում արդեն գրվում էր սոցիալիզմի և, հետևաբար, պետության լիակատար պարտության վերջին էջը, որին զուգահեռ, գերմանական երկու պետությունները հայտնի քառյակի՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի,

Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի «հսկողությամբ», սկսեցին բանակցություններ վարել Գերմանիայի միավորման խնդրի կապակցությամբ: ԳԴՀ-ից դուրս բերվեց նրա գոյության երաշխավորի՝ ԽՍՀՄ զինված ուժերի զորակազմը՝ Արևմտյան զորամիավորումը, իսկ 1990 թ. հոկտեմբերի 3-ին ուժի մեջ մտավ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության միավորման մասին համաձայնագիրը (ստորագրվել էր նույն թվականի օգոստոսի 31-ին):

ԳԴՀ-ն, որպես պետություն, դադարեց գոյություն ունենալ և, ըստ էության, «կլանվեց» աշխարհի ուժեղագույն պետություններից մեկի՝ ԳՖՀ-ի կողմից:

Միավորված Գերմանիան անցումային շատ կարճ ժամանակահատվածում ներդաշնակեցրեց օրենսդրական հակադիր դաշտերը, օգտագործելով և միակցելով երկու գերմանական պետությունների իրավական առումով հաջողված պատմությունները, պահպանելով գործադիր դաշտի կառավարման արևմտագերմանական մոդելը, «լեգոյի» սկզբունքով համակցելով գիտության, առողջապահության, արդյունաբերության և այլ ոլորտների լավագույն փորձերը: Սակայն, այդ ամենով հանդերձ, երկար տարիներ պահանջվեցին, որ երկիրը հաղթահարեր երկու պետությունների միավորմամբ առաջացած՝ տարբեր հոգեկերտվածքով առնվազն երկու սերնդի բարոյահոգեբանական անջրպետությունները:

Այսօրվա Գերմանիան արդեն փակել է Միավորման պատմության էջը և շարունակում է էական դերակատարում ունենալ համաշխարհային տնտեսական քաղաքականության նորացվող սկզբունքների մշակման, ստեղծման և գործնական կիրառման տեսանելի ու անտեսանելի գործընթացներում՝ անվերապահորեն պահպանելով իր ամուր դիրքն ու կշիռը G7-ում և աշխարհում:

Ստորև բերվող ցուցանիշները ասվածի

¹⁶ Այս եզրույթը սկսել է շրջանառվել Ուլիսթոն Չերչիլի՝ 1946 թ. մարտի 5-ի ֆուլտոնյան հայտնի ելույթից հետո: Չերչիլը «երկաթե վարագույր» ասելով նկատի է ունեցել այն իրողությունը, որ կոմունիստական գաղափարախոսություն որդեգրած երկրներում, բացառելով կապիտալիստական երկրների հետ ցանկացած ձևաչափով հաղորդակցումը, սկսեցին կիրառվել քաղաքական, տեղեկատվական և սահմանային «կոշտ» արգելքներ:

խոսուն վկայությունն են:

XXI դարի երկրորդ տասնամյակի վերջնազձին Գերմանիայում արդյունաբերության մասնաբաժինը համախառն ավելացված արժեքի մեջ 22,9% է. այս ցուցանիշն ավելին է, քան G7-ի որևէ այլ երկրում: Չինաստանից և ԱՄՆ-ից հետո Գերմանիան երրորդն է արտահանող երկրների շարքում և 2019 թ.-ին արտահանել է 1,327,6 մլրդ եվրոյի ապրանք: Արտահանման մասնաբաժինը կազմել է գրեթե 40%, արդյունաբերության ոլորտում՝ ավելի քան 50%: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) համար արտաքին առևտրի կարևորության տեսանկյունից, G7-ի երկրների շարքում Գերմանիան ամենաբաց ազգային տնտեսությունն է: Արտաքին առևտրի քվոտան (ներմուծման և արտահանման հանրագումարը ՀՆԱ-ի նկատմամբ) 84,4% է, իսկ ԱՄՆ-ում դա ընդամենը 26,7% է: Ներկայիս Գերմա-

նիայում աննախադեպ է փոքր և միջին ձեռնարկատիրության մասնաբաժինը տնտեսության մեջ: Այսպես՝ մինչև 500 աշխատակից ունեցող և տարեկան 50 մլն եվրո շրջանառությամբ գործող ընկերությունները կազմում են շուրջ 95%: Համաշխարհային արդյունաբերական տոնավաճառների և միջոցառումների 2/3-ը տեղի է ունենում հենց այստեղ, երկիրը մոտենում է լիարժեք զբաղվածության նիշին: Մասնավորապես՝ գործազուրկների թիվը 2018-ի հունիսին 2.2 միլիոն էր, որը միավորումից ի վեր ամենացածր ցուցանիշն է, իսկ միայն 5 գործատու՝ «Volkswagen»-ը, «Deutsche Post»-ը, «Schwarz-Gruppe»-ը, «Siemens»-ը, «Robert Bosch»-ը, ամբողջ աշխարհում ապահովում է շուրջ 2.4 մլն մարդու զբաղվածություն:

Սա է այսօրվա միավորված Գերմանիան:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Дженкинс Р. «Франклин Делано Рузвелт». КоЛибри. 2013г./стр..234-237/
2. Маркова А.Н., Скворцова Е.М. Эрхард Л. Благополучие для всех. Начала-пресс. 1991г.
3. Павлов Н.В. Внешняя политика ГДР (1949 – 1990) / Н.В. Павлов // MGIMO.ru. – 2012
4. <https://histrf.ru/biblioteka/b/istoriia-plana-marshalla>
5. https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D1%80%D0%BE%D1%82%D0%B5%D0%BA%D1%82%D0%BE%D1%80%D0%B0%D1%82_%D0%A1%D0%B0%D0%B0%D1%80
6. <https://militaryarms.ru/voennye-konflikty/korejskaya-vojna/>
7. <https://www.dw.com/ru/как-и-зачем-была-создана-гдр/>
8. <https://www.un.org/development/desa/press/2014/04/20140423-international-manual-on-arms.html>
9. https://ru.wikipedia.org/wiki/Список_государств_—_членов_HATO/
10. https://hy.wikipedia.org/wiki/Վարչապալի_պայմանագիր/
11. <https://www.deutschland.de/ru/topic/ekonomika/>

Амазасп ГАЛСТЯН*Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук*

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

**ОБЪЕДИНЕНИЕ ЧЕРЕЗ 45 ЛЕТ: ИСТОРИЯ ВОЗРОЖДЕНИЯ ГЕРМАНИИ, РАСКОЛОТ И
РАЗГРОМЛЕННОЙ СОКРУШИТЕЛЬНОЙ ВОЙНОЙ**

Оккупированная Германия, полностью разгромленная во Второй мировой войне, после ее окончания была разделена основными игроками мировой военно-политической арены, странами выигравшими войну: СССР, США, Великобританией и Францией. Через четыре года, в 1949 году, в соответствии со своими стратегическими интересами, победители создали два немецких государства - Федеративную Республику Германию и Германскую Демократическую Республику.

В результате, в качестве правопреемника довоенной Германии «родились» два государства с совершенно противоположными полюсами государственной экономической политики, которые по разным объективным и субъективным причинам имели разные стартовые позиции развития, что в конечном итоге предопределило их место и роль как в европейском регионе, так и в мире. В статье представлены особенности развития послевоенных экономик двух германских государств и делается попытка выяснить, какие факторы повлияли на эти процессы, в результате чего объединение Германии происходило не на равных правах, а по принципу поглощения.

Ключевые слова: *Вторая мировая война, ФРГ, ГДР, план Маршалла,
«Экономическое чудо», Берлинская стена, объединение*

Hamazasp GALSTYAN*Researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics*

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

**UNIFICATION AFTER 45 YEARS: THE STORY OF THE REBIRTH OF CRUSHINGLY DEFEATED
AND THEN DIVIDED GERMANY**

Completely defeated in World War II and occupied Germany after the end of the war was divided into two parts by the main players of the world military-political arena players, by the countries that won the war: the USSR, the USA, Great Britain and France. Four years after the split, in 1949, in accordance with their strategic interests, the winners of the war created two German states: The Federal Republic of Germany and The German Democratic Republic.

As a result, states with completely opposite state and economic poles were born, states which, for many objective and subjective reasons, had different starting positions of development, which ultimately predetermined the place and the role of each of them both in the European region and in the world. The paper presents the peculiarities of the development of post-war economies of the two German states. Also an attempt is made to clarify what factors influenced these processes as a result of which the unification of Germany was carried out not on an equal footing but on the principle of absorbing one another.

Keywords: *World War II, The Federal Republic of Germany, The German Democratic Republic, Marshall Plan, "Economic Miracle", Berlin Wall, Unification*